ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 07-L **«19» փետրվարի 2025 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ԻՆՔՆԱՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքով հաստատված հավելվածի 81-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման գործընթացը կազմակերպելու մասին ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ՝ **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի փետրվարի 19-ի
N 07-Լ հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ԻՆՔՆԱՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. 2005 թվականից Հայաստանի Հանրապետությունը միացել է Բոլոնիայի գործընթացին՝ ստանձնելով նաև Հայաստանի Հանրապետությունում գործող որակավորումների համակարգը համաեվրոպական որակավորումներին համապատասխանեցնելու հանձնառությունը: Որակավորումների ազգային շրջանակի (այսուհետ՝ ՈԱՇ) ինքնահավաստագրումը գործընթաց է, որի ընթացքում գնահատվում և հաստատվում է ՈԱՇ-ի համապատասխանությունը համաեվրոպական կամ միջազգային ստանդարտներին, ինչպիսիք են Որակավորումների Եվրոպական շրջանակը (EQF) կամ Եվրոպական բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակը (QF-EHEA):

2. ՈԱՇ-ի ինքնահավաստագրման գործընթացը չիրականացնելու դեպքում Հայաստանի Հանրապետությունը չի կարող լիարժեք մասնակցել Եվրոպական Միության (ԵՄ) կրթական նախաձեռնություններին և ինտեգրացիոն գործընթացներին:

3. Եվրոպական կրթական ստանդարտներին Հայաստանի Հանրապետության ՈԱՇ-ի համապատասխանության պաշտոնական հավաստման դրական արդյունքները կարտացոլվեն Տեղեկատվական կենտրոնների Եվրոպական ցանցի և Եվրոպական միության ազգային ակադեմիական ճանաչման տեղեկատվական կենտրոնների միության (ENIC-NARIC networks) միասնական կայքէջում, ինչի արդյունքում կմեծանա արտասահմանյան բուհերի և գործատուների վստահությունը Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի և որակավորումների նկատմամբ, որն էլ իր հերթին կպարզեցնի օտարերկրյա պետություններում բուհ ընդունվելու, ուսանողների շարժունության, շրջանավարտներին օտարերկրյա պետություններում աշխատանքի ընդունելու գործընթացները:

4. Հայաստանի Հանրապետության ՈԱՇ-ի ինքնահավաստագրումը դյուրին կդարձնի նաև բուհերի և հետազոտողների հասանելիությունը ԵՄ-ի դրամաշնորհներին և կրթական նախագծերին:

5. ՈԱՇ-ի ինքնահավաստագրումը կարևոր նշանակություն կունենա նաև օտարերկրյա ուսանողների համար՝ Հայաստանի Հանրապետության բուհերի գրավչության մեծացման տեսակետից: Հայաստանի Հանրապետության ՈԱՇ-ի եվրոպական ստանդարտներին համապատասխանելու պաշտոնական ճանաչումը կմեծացնի բուհերի մրցունակությունը և օտարերկրյա ուսանողների թվաքանակը:

6. Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման նպատակներն են՝

1) ՈԱՇ-ի և միջազգային ստանդարտների ներդաշնակեցումը,

2) որակավորումների թափանցիկության մեծացումը՝ նպաստելով ակադեմիական և մասնագիտական շարժունությանը,

3) միջազգային գործընկերների շրջանում Հայաստանի Հանրապետության ՈԱՇ-ի նկատմամբ վստահության մեխանիզմների ապահովումը:

7. ՈԱՇ-ի ինքնահավաստագրումը հիմնված է Կոպենհագենի և Բոլոնիայի գործընթացների վրա և ներառում է հետևյալ հիմնական սկզբունքները՝

1) ՈԱՇ-ի որակավորումների համապատասխանությունը Որակավորումների Եվրոպական շրջանակի (EQF) մակարդակներին,

2) ՈԱՇ-ի բարձրագույն կրթության որակավորումների համապատասխանությունը Եվրոպական բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակին (QF-EHEA),

3) թափանցիկ չափանիշների և չափորոշիչների կիրառումը,

4) ազգային և միջազգային փորձագետների ներգրավվածությունը,

5) ինքնահավաստագրման արդյունքների հանրայնությունը և հասանելիությունը:

8. ՈԱՇ-ի ինքնահավաստագրման հիմնական փուլերն են՝

1) միջազգային ստանդարտներին ՈԱՇ-ի համապատասխանության վերլուծություն (EQF, QF-EHEA),

2) ՈԱՇ-ի ինքնահավաստագրման զեկույցի (այսուհետ՝ զեկույց) պատրաստում, որը կներառի որակավորումների մակարդակների նկարագրությունը, դրանց

համապատասխանությունը միջազգային շրջանակներին, որակավորումների շնորհման մեխանիզմները,

3) ինքնահավաստագրման զեկույցի քննարկում ներքին և միջազգային փորձագետների և շահագրգիռ կողմերի հետ (պետական մարմիններ, բուհեր, գործատուներ),

4) արդյունքների հրապարակում և միջազգային ճանաչում (օրինակ՝ զեկույցի ներկայացում Բոլոնիայի գործընթացի խմբին կամ EQF-ի խորհրդատվական խմբին):

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ԻՆՔՆԱՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ

9. Սույն ծրագրով նախատեսված բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի (այսուհետ՝ ԲԿ-ՈԱՇ) ինքնահավաստագրման նպատակն է Հայաստանի Հանրապետության ՈԱՇ-ի բարձրագույն կրթությանը համապատասխանող 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակների և Եվրոպայի բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակի (QF-EHEA) համապատասխանեցման միջոցով ապահովել միջազգային մակարդակում Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության որակավորումների թափանցիկության մեծացումը, դյուրին դարձնել ուսանողների ակադեմիական և շրջանավարտների մասնագիտական շարժունությունն ու ապահովել Հայաստանի Հանրապետության դիպլոմների միջազգային ճանաչումը:

10. ԲԿ-ՈԱՇ-ի ինքնահավաստագրման գործընթացը ներառում է հետևյալ հինգ հիմնական փուլերը (**տե՛ս Գծանկար 1**)՝

1) նախապատրաստական փուլ (6-12 ամիս),

2) համապատասխանության վերլուծության և զեկույցի պատրաստման փուլ (12-18 ամիս),

3) արտաքին փորձաքննության և քննարկումների փուլ (6-12 ամիս),

4) զեկույցի ներկայացման և ճանաչման փուլ (6-12 ամիս),

5) մշտադիտարկման և բարելավումների/նորացումների փուլ (շարունակական գործընթաց):

Գծանկար 1. ԲԿ-ՈԱՇ-ի ինքնահավաստագրման գործընթացը:



11. ԲԿ-ՈԱՇ-ի ինքնահավաստագրման գործընթացի իրականացման տևողությունը երկուսուկեսից չորսուկես տարի է (տևողության վրա ազդում են բացահայտված թերությունները և դրանց շտկման տևողությունը/արդյունավետությունը, հետևաբար հնարավոր է սցենար, որի դեպքում գործընթացի լիարժեք իրականացման համար ավելի շատ ժամանակ կպահանջվի):

12. ԲԿ-ՈԱՇ-ի ինքնահավաստագրման գործընթացի հիմնական փուլերի նպատակները՝ ըստ ակնկալվող արդյունքների և դրանց համար նախատեսված ժամկետների բերված են **Աղյուսակ 1-ում**:

3. ԻՆՔՆԱՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

13. Ինքնահավաստագրման իրականացման արդյունքում կապահովվեն ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի զարգացմանն ուղղված հետևյալ արդյունքները՝

1) կապահովվի ԲԿ-ՈԱՇ-ի և Եվրոպայի բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակի (QF-EHEA) համապատասխանությունը,

2) կընդլայնվի Հայաստանի Հանրապետության դիպլոմների միջազգային ճանաչումը,

3) ավելի սահուն կդառնա ակադեմիական և մասնագիտական շարժունությունը,

4) կմեծանա Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի գրավչությունը,

5) կապահովվի բարձրագույն կրթության ազգային համակարգի զարգացման խթանումը:

Աղյուսակ 1. Ինքնահավաստագրման գործընթացի հիմնական փուլերի նպատակները և ակնկալվող արդյունքները:

Հ/Հ	Նպատակ	Միջոցառումներ	Փուլի ակնկալվող արդյունքներ	Ժամկետ
Ի. Նախապատրաստական փուլ				
1.	Ինքնահավաստագրման աշխատանքային խմբի ձևավորում	1.1 Գործընթացի իրականացման նախնական և ընթացիկ խորհրդատվություն տրամադրող կազմակերպության(ունների) որոշում և նախնական պայմանավորվածությունների ձեռքբերում (անհրաժեշտության դեպքում պայմանագրի կնքում)	1.Պատասխանատու մարմինները սահմանված են 2. Աշխատանքային խումբը ձևավորված է Իրականացվել է Հայաստանի Հանրապետության և միջազգային ստանդարտների վերլուծություն 3.Ինքնահավաստագրման մեթոդաբանությունը մշակված է	2025թ. 2-ից 4-րդ եռամսյակ, 2026թ. 1-ին եռամսյակ
		1.2 Պատասխանատու մարմինների սահմանում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, բուհական ասոցիացիաներ, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն և այլ)		
		1.3 Աշխատանքային խմբի ձևավորում և գործընթացի համակարգողի նշանակում		

		1.4 Միջազգային փորձագետների հետ համագործակցության մեխանիզմների որոշում (Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական ասոցիացիա (ENQA), Եվրոպական բուհերի ասոցիացիա (EUA), Բոլոնիայի գործընթացի հետամուտ խումբ (Bologna Follow-up Group), Մասնագիտական կրթության զարգացման Եվրոպական կենտրոն (Cedefop))		
2.	Միջազգային ստանդարտների և ազգային նորմատիվ բազայի վերլուծություն	2.1 Դուբլինյան նկարագրիչների մակարդակների, Եվրոպայի բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակի (QF-EHEA) և ինքնահավաստագրմանը ներկայացվող պահանջների մանրակրկիտ ուսումնասիրություն		
		2.2 ԲԿ-ՈԱՇ-ի սահմանված մակարդակների և միջազգային չափորոշիչներին դրանց համապատասխանության վերլուծություն		
		2.3 Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային համակարգի գնահատում		
3.	Ինքնահավաստագրման մեթոդաբանության մշակում	3.1 Միջազգային պահանջներին ԲԿ-ՈԱՇ-ի համապատասխանության վերլուծության չափանիշների և ցուցիչների որոշում		
		3.2 Զեկույցի կառուցվածքի մշակում		

		3.3 Տվյալների աղբյուրների որոշում (կրթական ծրագրեր, որակավորումների ճանաչման մեխանիզմներ և այլն)		
II. Համապատասխանության վերլուծության և զեկույցի պատրաստման փուլ				
4.	ԲԿ-ՈԱՇ-ի գնահատում	4.1 ԲԿ-ՈԱՇ-ի կառուցվածքի նկարագրություն (բակալավրիատ, մագիստրատուրա, դոկտորանտուրա)	1. ԲԿ-ՈԱՇ-ը վերլուծվել է 2. Զեկույցի նախագիծը մշակված է 3. Անհամապատասխանություն-ները դուրս են բերվել	2026թ. 2-ից 4-րդ եռամսյակ, 2027թ. 1-ից 3-րդ եռամսյակ
		4.2 Որակավորումների շնորհման համակարգի և կրթական ծրագրերի ու դրանց ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանության վերլուծություն		
		4.3 Բուհերի որակի ներքին ապահովման և հավատարմագրման ընթացակարգերի գնահատում		
5.	ԲԿ-ՈԱՇ-ի և Եվրոպայի բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակի (QF-EHEA) համեմատություն	5.1 Եվրոպայի բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակի (QF-EHEA) և ԲԿ-ՈԱՇ-ի մակարդակների նկարագրիչների համադրություն		
		5.2 Մակարդակների համապատասխանության վերլուծություն		
		5.3 Տարբերությունների, բացերի և անհամապատասխանությունների դուրսբերում		
6.	Զեկույցի պատրաստում	6.1 Ինքնահավաստագրման մեթոդաբանության և սկզբունքների նկարագրում		
		6.2 Եվրոպայի բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակի (QF-		

		EHEA) և ԲԿ-ՈԱՇ-ի համապատասխանության փաստաթղթավորում		
		6.3 Դուրս բերված անհամապատասխանությունների շտկմանն ուղղված խորհրդատվության մշակում		
7.	Համապատասխանու-թյան ապահովման համար անհրաժեշտ բարեփոխումների իրականացում	7.1 Խորհրդատվությամբ նախատեսված բարեփոխումների իրականացում	Եթե իրականացված բարեփոխումները բավարար են պահանջներին համապատասխանելու համար, ապա մեկնարկում է 3-րդ փուլը, հակառակ դեպքում բարեփոխումները շարունակվում են մինչև համապատասխանության անհրաժեշտ մակարդակին հասնելը	3-րդ փուլի մեկնարկը կարող է հետաձգվել մինչև տվյալ կետի լիարժեք իրականա-ցումը
III. Արտաքին փորձաքննության և քննարկումների փուլ				
8.	Շահագրգիռ կողմերի հետ ազգային մակարդակում քննարկումներ	8.1 Բուհերի, ուսանողների, գործատուների հետ քննարկումների իրականացում	1. ՀՀ և միջազգային փորձագետների խորհրդատվությունը ստացված է 2. Զեկույցը լրամշակված և հաստատված է	2027թ. 4-րդ եռամսյակ,
		8.2 Առաջարկների հիման վրա զեկույցում ճշգրտումների իրականացում		
9.	Միջազգային փորձագետների ներգրավում	9.1 Զեկույցի գնահատում Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի (ENQA), Եվրոպական բուհերի ասոցիացիայի (EUA), Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի (Bologna Follow-up Group) անկախ փորձագետների կողմից		2028թ. 1-ից 3-րդ եռամսյակ

		9.2 Զեկույցի բարելավմանն ուղղված խորհրդատվության ստացում		
10.	Զեկույցի հանրային քննարկում	10.1 Սեմինարների, կլոր սեղանների և ներկայացումների կազմակերպում		
		10.2 Ստացված առաջարկների ներառում վերջնական զեկույցում		
IV. Զեկույցի ներկայացման և ճանաչման փուլ				
11.	Զեկույցի ներկայացում միջազգային կազմա-կերպություններին	11.1 Զեկույցի ներկայացում Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբին (Bologna Follow-up Group)	1. Եվրոպայի բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակի (QF-EHEA) սահմաններում ԲԿ-ՈԱՇ-ի պաշտոնական ճանաչում 2. Հայաստանի Հանրապետության որակավորումների միջազգային կարգավիճակի մեծացում	2028թ. 4-րդ եռամսյակ, 2029թ. 1-ից 3-րդ եռամսյակ
		11.2 Զեկույցի ներկայացում Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական (ENQA) և Եվրոպական բուհերի (EUA) ասոցիացիաներին		
12.	Միջազգային ճանաչման ընթացակարգ	12.1 Միջազգային փորձագետների կողմից զեկույցի վերլուծություն		
		12.2 Վերջնական շտկումների իրականացում		
		12.3 ԲԿ-ՈԱՇ-ը ճանաչելու որոշման ընդունում		
13.	Արդյունքի հրապարակում	13.1 Զեկույցի բաց հրապարակում/բաց հասանելիության ապահովում		
		13.2 Բուհերի, գործատուների և հանրության տեղեկացում		
V. Մշտադիտարկման և բարելավումների (նորացումների) փուլ				
14.	Մշտադիտարկման համակարգի մշակում	14.1 ԲԿ-ՈԱՇ-ի համապատասխանությունը պարբերաբար գնահատելու մեխանիզմի ստեղծում	1. ԲԿ-ՈԱՇ-ի մշտադիտարկման մեխանիզմը ստեղծված է	2029թ. 4-րդ եռամսյակ,

		14.2 Բարձրագույն կրթության որակավորումների տվյալների ազգային բազայի ստեղծում	2. ԲԿ-ՈԱՇ-ի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին իրականացված է	Շարունա-կական ըստ մշակված մեխանիզմի պահանջի
15.	ԲԿ-ՈԱՇ-ի բարելավում (նորացում)	15.1 Եվրոպայի բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակում (QF-EHEA) և միջազգային ստանդարտներում կատարվող փոփոխությունների գրանցում		
		15.2 Ազգային կրթական ստանդարտների համապատասխանեցում		
16.	Միջազգային համագործակցության զգարգացում	16.1 Համագործակցություն արտասահմանյան բուհերի և հավատարմագրման գործակալությունների հետ		
		16.2 Կոնֆերանսների կազմակերպում և փորձի փոխանակում		